ՀՏԴ 941(479.25) Պատմություն

Էդուարդ Դանիելյան,
գլխավոր մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր,
Հին դարերի պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ,
e-mail: liparited@gmail.com

ԱՐՑԱԽԻ ԳԱՀԵՐԵՑ ԻՇԽԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ ԴՈԼԱՅԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի Մեծն իշխան Հայկազուն-Սիսակյան-Արանշաղիկ-Վախթանգյան Հասան-Ջալալ Դոլան՝ Հասան-Ջալալյան տոհմի հիմնադիրը, 13-րդ դարի 30-50-ական թթ. –ին կարևոր դեր է խաղացել Կիլիկյան Հայաստանի ու Մեծ Հայաստանի քաղաքական և մշակութային կյանքում:

Միջնադարում Արցախ անվան հետ մեկտեղ , որը Մեծ Հայաստանի տասներորդ նահանգն է, օգտագործվում էր նաև իր գավառներից մեկի՝ Խաչենի անվանումը՝ ավելի լայն իմաստով:

1236թ-ին Խոխանաբերդ ամրոցի մոտ թաթար-մոնղոլական զավթիչներին դիմադրություն ցուցաբերելով՝ Հասան-Ջալալը ստիպեց նրանց ճանաչել իր իշխանությունը ինչպես Ներքին Խաչենում, այնպես էլ հետագայում՝ ամբողջ Արցախ-Խաչենում: Չմանկատուկի ճակատամարտից հետո (1243 թ.) նա հանդես եկավ որպես միջնորդ մոնղոլների և Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Առաջինի (1226-1269 թթ.) միջև բանակցություններում, որոնք ավարտվեցին պայմանագրի ստորագրմամբ: Իր համահայկական գործունեությամբ Արցախի Մեծն իշխան Հասան-Ջալալը կարևոր ավանդ ունեցավ ինչպես Կիլիկյան Հայկական թագավորության Արևելյան քաղաքականության մեջ, այնպես էլ հայկական մշակույթի ասպարեզում: Քաղաքական, դիվանագիտական և մշակութային ոլորտներում նրա գործունեության արդյունքները, հարստացնելով հայկական քաղաքակրթական արժեհամակարգը, կրում են հզոր հայրենասիրական հոգևոր սնունդ:

Эдуард Даниелян,
главный специалист, доктор исторических наук,
заведующий отделом Древних веков,
Институт истории НАН РА,
e-mail: liparited@gmail.com

ОБЩЕАРМЯНСКАЯ ЦИВИЛИЗАЦИОННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ВЕЛИКОГО КНЯЗЯ АРЦАХА АЙКАЗУН ХАСАНА-ДЖАЛАЛА ДОЛЫ

Великий князь Арцаха Айказун-Сисакян-Араншахик-Вахтангян Хасан-Джалал Дола (основатель рода Хасан-Джалалян) в 30-50х гг. XIII века сыграл важную роль в политической и культурной жизни Великой Армении и Киликийской Армении.

В средневековье, наряду с названием Арцах, десятой провинции Великой Армении, исползовалось название одного из его областей - Хачен, в более широком смысле.

В 1236 г., оказав сопротивление татаро-монгольским захватчикам у крепости Хоханаберд, Хасан-Джалал вынудил их признать его власть, как во Внутреннем Хачене, так и затем, во всем Арцах-Хачене. После битвы при Чманкатуке (1243 г.) он выступил посредником в переговорах между царем Киликийской Армении Хетумом I (1226-1269 гг.) и монголами, завершившимися подписанием договора. Своей общеармянской деятельностью Великий князь Арцаха Хасан-Джалал внес важный вклад, как в Восточную политику Киликиийского Армянского царства, так и в сферу армянской культуры. Результаты его деятельности в политической, дипломатической и культурной сферах, обогатив армянскую цивилизационную систему ценностей, несут мощный патриотический духовный заряд.

Eduard Danielyan,
Chief specialist, Doctor in History,
the Head of the Department of Ancient History,
Institute of History, NAS RA
e-mail: liparited@gmail.com

PAN-ARMENIAN CIVILIZATIONAL ACTIVITIES OF THE GREAT PRINCE OF ARTSAKH HAYKAZUN HASAN-JALAL DOLA

The Great Prince of Artsakh, Haykazun-Sisakyan-Aranshakhik-Vakhtangyan Hasan-Jalal Dola, the founder of the Hasan-Jalalyan family, in the 30-50s of the 13th century played an important role in the political and cultural life of Great Armenia and Cilician Armenia.

In the Middle Ages, along with the name of Artsakh, the 10th province of Great Armenia, was used the name of one of its regions – Khachen was used in wider meaning.

In 1236, while resisting to the Tatar-Mongol invaders at the fortress of Khokhanaberd, Hasan-Jalal forced them to recognize his power in Inner Khachen, and then in the whole Artsakh-Khachen. After the battle at Chmankatuk (1243) he acted as a mediator in the negotiations between the King of Cilician Armenia, Hetum I (1226-1269) and Mongols, which

ended with signing the treaty. The Great Prince of Artsakh Hasan-Jalal contributed greatly to the Eastern policy of the Armenian Kingdom of Cilicia as well as to the sphere of Armenian culture by his Pan-Armenian activities. The results of his activities in political, diplomatic and cultural spheres, bear mighty patriotic spiritual charge enriching the Armenian civilizational system of values.

Հայոց ավելի քան հինգհազարամյա պետականության հիմքում Հայկական լեռնաշխարհում հայ ազգի տեղաբնիկությունն ու քաղաքակրթական գործոններն են: Հին և միջնադարյան Հայաստանում պետականության զարգացման գագաթնակետն էր թագավորական իշխանությունը[1]: Ուստի հետագայում երկրի համար դժվարին ժամանակներում, միասնական պետության, ի դեմս Հայոց թագավորության, վայրէջքի պայմաններում պետականության կրողը մնում էին նախարարական համակարգը, ինչպես նաև առանձին իշխանական տները:

Հայ Արշակունիների թագավորության անկումից (428թ.) հետո, ըստ Եղիշեի՝ «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորությունն»[2]: Հայաստանի արևելյան և արևմտյան մասերում պետականությունը միջնադարում պահպանվել էր շնորհիվ նախարարական համակարգի[3], որի հիմքի վրա հայ ժողովրդի ազատագրական պայքարի, ինչպես նաև ներքին իրողությունների արդյունքում վերականգնվում էր թագավորական իշխանությունը: Այդ օրինաչափության արտահայտություններից էին Արցախում և հարակից տարածքներում Հայկազուն-Սիսակյան-Առանշահիկ Վաչագան Բարեպաշտի թագավորությունը (484թ. - VI դ. առաջին կես), հետագայում՝ Հայոց Բագրատունյաց (885-1045 թթ.) (Բագարանից, Երազգավորս/Շիրակավանից և Կարսից հետո՝ 961թ. Անին հռչակվեց մայրաքաղաք), Վասպուրականի Արծրունիների (908-1021 թթ.), Կարս-Վանանդի (963-1065թթ.), Տաշիր-Զորագետի Կյուրիկյանների (966-1113 թթ.), Սյունիքի (970-1170 թթ.), Փառիսոսի (Xդ. կես-1044 թթ.) թագավորությունները, Խաչենի իշխանությունը (X-XVI դդ.), Զաքարյանների իշխանապետությունը (XII դ. վերջ-XIII դ. առաջին տասնամյակներ), Հայկական իշխանապետությունը (1080-1197 թթ.) ու թագավորությունը (1198-1375 թթ.) Կիլիկյան Հայաստանում, Տայքի, Տարոնի, Սասունի, Զեյթունի իշխանությունները և այլն:

Հատկանշական է, որ Զաքարյանների ռազմաքաղաքական ակտիվացման ժամանակաշրջանում Մխիթար Գոշը (1130 – 1213 թթ.), ստեղծելով իր «Դատաստանագիրք Հայոց» կոթողային աշխատությունը, նշել է. «…յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ, ի վաղնջուց ժամանակի մնացելոց սակաւ իշխանացս ի կողմանս Խաչենոյ… եւ կողմանցն Կիւղիկեայ՝ մեծի իշխանին Ռուբէնի»[4]: 1198 թ. Կիլիկիայի Հայկական իշխանապետությունը (1080–1197) հռչակվեց թագավորություն: 1214 թ. Ներքին Խաչենում իշխանության գլուխ անցավ իշխան Վախտանգի ու Խորիշահ Զաքարյան իշխանուհու զավակը՝ Հասան-Ջալալ Դոլան[5]: Գանձասարի Ս.Հովհաննես Մկրտիչ եկեղեցու արձանագրությունում նա հիշատակվել է՝ «ԲՆԱԿԱՒՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՒ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ…» (1240 թ.)[6] տիտղոսով:

Ժամանակի ընթացքում Արցախ անվանը զուգահեռ Խաչեն անվան ավելի լայն իմաստով հիշատակությունը վկայվել է Վարդան Վարդապետի (XIII դ.) («Արցախ Խաչէնք է… Եւ ի յԱրցախ՝ սուրբ ուխտն Գանձասար»)[7], Գանձասարի առաջնորդ՝ վարդապետ *Մատթեոս Մոնոզոնի* («տեղիք գծագրութեան սորա եղև ի սուրբ ուխտս *Գանձասարայ*, յերկիրս *Արցախական*, որ այժմ կոչի *Խաչէն…*»)[8], 1551 թ. Հայրապետ աբեղայի («ի յերկիրս յԱրցախ, որ է Խաչէն կոչի, ի տեղիս Մեծարանիս, որ է դուռն Գանձասարայ…»)[9] կողմից:

---

[1] Այդ է վկայում Հայկազունների գլխավորած Հայոց ազգաբանությանը նվիրված Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991)

[2] Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 12:

[3] Է.Լ.Դանիելյան, Հայոց պետականությունը և նախարարական համակարգը հնագույն ժամանակներից վաղ միջնադար. – «Գիտություն և տեխնիկա», 1993, N 9, էջ 5-6, N 10, էջ 4-8, Է.Լ.Դանիելյան, Հին Հայոց պետականության գաղափարական ընկալումը վաղ միջնադարյան հայկական աղբյուրներում. - «Հարք», 2006, N 1, էջ 18-31:

[4] Մխիթար Գոշ. Դատաստանագիրք Հայոց: Նախադրութիւն, ԺԱ, Յիշատակարան սակաւուք, էջ 25, Գարեգին Ա Կաթողիկոս. Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, 1951, էջ 505: Ի դեպ՝ Կիլիկիայում XI դ. հաստատված Հեթումյանների ճյուղի հիմնադիր Օշինը եկել էր Արցախի հարևան Ուտիք նահանգում գտնվող իր հայրենի կալվածքից [«Մայրեաց ջուրք հանդէպ Գանձակայ» (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 195)]:

[5] Վարդանայ Վարդապետի Հաւաքումն Պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 140:

[6] «ԵՍ, ՆՈՒԱՍՏ ԾԱՌԱ ԱՍՏՈՒԾՈՅ, ՋԱԼԱԼ ԴԱՒԼԱՅ ՀԱՍԱՆ, ՈՐԴԻ ՎԱԽՏԱՆԳԱ, ԹՈՌՆ [ՄԵԾԻՆ] ՀԱՍԱՆԱ, ԲՆԱԿԱՒՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՒ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ…» (1240թ.) (Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ: Կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, Երևան, 1982 (այսուհետև՝ Դիվան), էջ 38): Արցախի վիմագիր արձանագրություններում Հասան-Ջալալ Դոլան իր կյանքի օրոք և հետագայում մեծարվել է նաև հետևյալ տիտղոսներով. «ՏԷՐ ԽԱՉԻՆՈՅ ՋԱԼԱԼ» (1249թ.), «… ՅԱՐՔԱՅ ՋԱԼԱԼԱ ԴԱՒԼԱՅ ԵՒ ԱԹԱԲԱԿ ՈՐԴԻ ՆՈՐԱՅ ԻՇԽԱՆ ԽԱՉԻՆՈՅ ԵՒ ԸՌԱՆԱՅ» (1249թ.) (էջ 87-88), «ԵՍ Ջ[ԱԼԱԼ ԴԱՒԼԱ]ՅՍ, ՈՐԴԻ ՎԱԽՏԱՆԳԱ, ԿՈՂՄՆԱԿԱԼ Ա[Ր]ՑԱԽԱՅ…» (1261թ.)(էջ 40-41), «… ՄԱՄԱԽԱԹՈՒՆՍ, ԴՈՒՍՏՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻՆ ՋԱԼԱԼ ԴԱՒԼԱ ՀԱՍԱՆ[Ա], ՏԵԱՌՆ ԽԱՉԻՆՈ. . .» (1280թ.) (էջ 41), «ՅԻԱՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱՅԻՆ ՋԱԼԱԼ ԴԱՒԼԻՆ ԵՒ ՈՐԴԻ [Ի]ՒՐՈՅ ԻՒԱՆՈՅ ԱԹԱԲԵԿԻՆ…» (1281թ.) (էջ 116), «. . . ԹԱԳ[ԱՒ]ՈՐ ՋԱԼԱԼԱՅ ԴՈՎԼԻՆ ՀՐԱՄԱՆՈՎ. . .» (XIII դ. 90-ական թթ.) (էջ 15), «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵՏՐԱՊՕԼՏԻՆ, ԲԱՂՏԱՍԱՐԱՅ ՄԵԾԻ ԱՐՀԻՆ… ՅԱՋԳԷՆ ՋԱԼԱԼ ՄԵԾ ԻՇԽԱՆԻՆ. ՏԵԱՌՆ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ» (1854թ.) (էջ 65):

[7] Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի: Քննական հրատարակութիւն Հ. Պէրպէրեանի» Բարիզ, 1960, էջ 11:

[8] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450թթ.): Կազմեց Է.Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 195, Թ. Մինասյան, Գանձասարի գրչության կենտրոնը, Բանբեր Մատենադարանի, N 20, Երևան, 2014, էջ 231:

[9] ՄՄ ձեռ. 6513, թ. 280բ,, տե՛ս Թ. Մինասյան, նշվ. աշխ., էջ 232:

Մեծ Հայքի տասներորդ՝ Արցախ աշխարհի Մեծառանք գավառը, ինչպես նշել է Բ.Ուլուբաբյանը «միջին դարերում կոչվում էր նաև Ներքին Խաչեն… X-XII դարերից, հատկապես՝ Հասան-Ջալալյանների օրոք» *Խաչեն* անունը ցույց էր տալիս հին նահանգի՝ Արցախի ամբողջ լեռնային ու նախալեռնային տարածքը… «Արցախ-Խաչենի սահմանը հարավից սկսած անցնում էր Աղավնո գետով… Սողքը մտնում էր Արցախ-Խաչենի մեջ»[1]:

Արցախի (հոգևոր կենտրոնը՝ Գանձասար, Ներքին Խաչենում) գահերեց իշխան՝ Հայկազուն-Սիսակյան տոհմից սերող Առաշնահիկ-Վախթանգյանների ճյուղի ներկայացուցիչ Հասան-Ջալալ Դոլան[2] (Հասան-Ջալալյանների տոհմի հիմնադիրը), XIII դարի հատկապես 30-50-ական թվականներին նշանակալից քաղաքական և մշակութային ազգապահպան գործունեություն ծավալեց Հայոց աշխարհում, միևնույն ժամանակ թե՛ դիմադրություն ցուցաբերելով և թե՛ դիվանագիտորեն դիմակայելով թաթար-մոնղոլական նվաճողներին: 1236 թ. զավթելով և ավերելով հյուսիս-արևելյան Հայաստանի մի շարք բերդերը ու ամրոցները (Գագ, Տավուշ, Մածնաբերդ, Նոր Բերդ, Լոռե և այլն)՝ նրանք շարժվել էին դեպի Խաչեն ու Սյունիք[3]: Թաթար-մոնղոլները Վերին Խաչենում գրավելով ու թալանելով *Հաւախաղաց* (Հավքախաղաց) բերդը[4], «չոգան եւ ի վերայ բարեպաշտ իշխանին Հասանայ, զոր Ջալալն կոչէին…»[5]: Նրանք ուժեղ դիմադրության հանդիպեցին հատկապես Ներքին Խաչեն գավառում: 853 թ. Արցախ ներխուժած թշնամուն ցուցաբերած փառապանծ Եսայի Աբու Մուսեի դիմադրության ոգով, Հասան-Ջալալ Դոլան 1236 թ. անառիկ պահեց Խոխանաբերդը, ստիպելով թաթար-մոնղոլներին բանակցել իր հետ[6]:

Կիրակոս Գանձակեցու հիշատակած «Մեծ իշխանն Խաչենոյ և կողմանցն Արցախու»[7] տիտղոսը հստակ վկայում է Հասան Ջալալի՝ Արցախում իշխանական գահերեցության մասին: Այստեղ կարևոր է Հասան-Ջալալին վերադարձված *հայրենի* կալվածքների՝ Ներքին Խաչենից դուրս գտնվելու իրողությունը: Հասան-Ջալալը մեկնել էր քրիստոնեություն ընդունած Սարթախի՝ Բաթու խանի որդու մոտ նրա միջնորդությամբ՝ իրեն վերադարձնելու «զհայրենիս իւր զՉարաբերդ և զԱկանայ և զԿարկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն թուրքաց և վրաց»[8]:

Այն, որ Հասան-Ջալալի տիրույթները նախկինում ևս ավելի մեծ էին, վկայում է «տէր Խաչենոյ» տիտղոսը իր իշխանության ավելի վաղ՝ 1229 թ. ժամանակաշրջանի վիմագիր արձանագրություններում. «ԵՍ ՀԱՍԱՆ ՈՐԴԻ [ՎԱԽԹԱՆԳԱ] ԵԻ ԽՈՐԻՇԱՀԻ, ՏԷՐ ԽԱՉԵՆՈ», «ՀՐԱՄԱՆԱՒ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՍԱՆԱ, ՏԵԱՌՆ ԽԱՉԻՆՈ…», «… բարեպաշտ արքային Ջալալին…»[9]:

Չարաբերդի մասին Մ. Բարխուդարյանցը գրել է. «Գաւառն, որ ընկած է Մռաւ բարձր լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թրղի և Թարթառ ջրերի ձախ և Կուրակ գետակի աջ ափերի մէջ, ստացած է Մեծ-Կողմանք, Մեծկուանք, Չարաբերդ, Թալիշ, Կիւլիստան, Ջրաբերդ և այժմ Ջուանշիր անունները»[10]: Հիշատակելով 1796 թ. մի տապանաքարի արձանագրությունը[11] նա ծանոթագրել է՝ «գաւառի հին անունն է, որ այժմ կոչվում է Ջրաբերդ»[12]: Ականան, ինչպես նշել է Բ.Ուլուբաբյանը, գտնվում էր Վերին Խաչենում, ուստի «այստեղ Հասան-Ջալալը պարզապես ներկայացված է որպես ամբողջ Խաչենի (իր խոսքով՝ Արցախական աշխարհի) գահերեց իշխանը, և հենց այդ պատճառով է, որ պատմիչը նրա հայրենիքն է համարում նաև Ականան»[13]: Այնուհետև նա եզրակացրել է. «Բավական էր հենց միայն Կոնստանտին Բարձրբերդցի կաթողիկոսի (1221-1267 թթ.) շատ արժեքավոր արձանագրությունը[14], որպեսզի անվերապահորեն հաստատվի, որ Հասան-Ջալալն էր համարվում Վերին և

---

[1] Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 32, 46-47:

[2] Հասան Ջալալյանների Հայկազուն՝ ազգա-տոհմային հիմքը նկատի ունենալով, Բաղդասար մետրոպոլիտը Դանիել բեկի (դաժանորեն սպանվել էր 1791թ. Իբրահիմ խանի ձեռքով) գերեզմանի վրա 1851 թ.դրված տապանաքարին արձանագրել է.«Ի ՏԱՆԷ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՄԵԾ ՋԱԼԱԼ ԴՈԼԻ ՏԵԱՌՆ ԱՐՑԱԽԱՅ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ» (Դիվան, էջ 145): Ի թիվս հայկական սկզբնաղբյուրների մյուս տեղեկությունների, այն հիմնարար նշանակություն ունի: Ֆ.Մամեդովան, նենգափոխելով պատմությունը, Հասան-Ջալալին և նրանից սերած Հասան-Ջալալյան տոհմը ներկայացրել է «ալբանական» ծագմամբ (Ф.Мамедова, Кавказская Албания и албаны, Баку, 2005, с. 75, 104)։ Հասան-Ջալալի հայրական կողմից՝ Հայկազուն-Սիսակյան-Առանշահիկ-Վախթանգյան և մայրական կողմից Զաքարյան տոհմական ծագման պատմական փաստը ջախջախիչ է ադրբեջանական կեղծարարության համար:

[3] Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 609-610:

[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 267:

[5] Նույն տեղում, էջ 268:

[6] Նույն տեղում, էջ 269:

[7] Նույն տեղում, էջ 358:

[8] Նույն տեղում, էջ 358-359: Հ.Մանանդյանը նշել է, որ Հասան Ջալալի այս այցելությունը Բաթու խանի մոտ «հավանական մի նշան է, որ Ներքին Խաչենը եղել է մոնղոլների ժամանակ անկախ իշխանություն…» (Հ.Մանանդյան, Երկեր, Գ, Երևան, 1977, էջ 233):

[9] Դիվան, էջ 79, 120:

[10] Մակար Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 24:

[11] «Այս է տապան Աւագ վարդապետին , որ է Չարապերտու Մեծ-Կուէնից»:

[12] Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ.,էջ 38: Հմմտ. Բ.Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 32), Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 263):

[13] Բ.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 191: Ականայի մասին տես նաև՝ Ա. Յակոբեան, նշվ. աշխ., էջ 259-260, 262, 273-274: Բ.Ուլուբաբյանը ենթադրել է, որ Կարկառը պետք է կապված լինի համանուն գետակի հետ, որի «ստորին ավազանը հին Հաբանդ գավառի արևմտյան մասն է ընդգրկում» (Բ.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 214):

[14] Վաղուհաս գյուղի Մայրաքաղաք կամ Տիրամայր եկեղեցու գավթի միջին խորանի ճակատի արձանագրությունում (1246 թ.)՝ «Աստուծոյ շնորհիւն ես Կոստանդին (Ա.) կաթողիկոս ամենայն Հայոց

Ներքին Խաչենների լիիրավ իշխանաց իշխանն ու ինքնակալ տերը: Վաղուհասի վանքում՝ Վերին Խաչենի կենտրոնում, Հայոց կաթողիկոսը քանդակել էր տվել արձանագրություն, որով ամբողջ Խաչենի իշխանապետ էր ճանաչել միայն *Մեծի Ջալալ Դաւլին*»[1]:

Համահայկական գործերում Արցախի գահերեց իշխան Հասան-Ջալալ Դոլայի գործունեությունը դրսևորվել է քաղաքական, դիվանագիտական և մշակութային ասպարեզներում: Նրա բարձր հեղինակության վկայությունն է իր միջնորդական առաքելությունը Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ի և մոնղոլների միջև հարաբերությունների հիմնադրման շրջանում: Հատկանշական է, որ Կիլիկիայի Հայկական թագավորության համար այս ճակատագրական պահին մոնղոլների հետ բանակցությունները սկզբնավորվել էին «միջնորդութեամբ իշխանին Ջալալին»[2]: Կիրակոս Գանձակեցու այս հաղորդմանը պատշաճ ուշադրություն է դարձվել հայ պատմագրության մեջ (Հ. Մանանդյան, Գ. Միքայելյան, Ա. Գալստյան, Ս. Բոռնազյան, Բ. Ուլուբաբյան, Լ. Տեր-Պետրոսյան)[3]: Մասնավորապես, Հ. Մանանդյանը, գրելով 1243 թ. Չմանկատուկի մոտ Իկոնիայի թյուրք-սելջուկների կրած պարտության մասին, նշել է. «Իկոնիայի սելջուկյան սուլթանի պարտությունից... հետո մոնղոլական արշավանքների վտանգը սպառնում էր արդեն Կիլիկիայի հայկական պետությանը: Այդ վտանգը Հեթում թագավորը, առանց ժամանակ կորցնելու, աշխատեց կանխել: Նա ուղարկեց Բաչու-նուինի... մոտ դեսպաններ և... կնքեց նրանց հետ, Խաչենցի Հասան-Ջալալի միջնորդությամբ, հաշտության և բարեկամության դաշինք...»[4]: Այսպիսով՝ Հասան-Ջալալ Դոլայի միջնորդական առաքելությունը կարևոր նշանակություն է ունեցել Կիլիկիայի Հայկական թագավորության Արևելյան քաղաքականության մեջ[5]:

«Մեծ իշխանն Խաչենոյ և կողմանցն Արցախու» Հասան-Ջալալ Դոլայի հիշատակը, ի թիվս գրավոր և վիմագիր սկզբնաղբյուրների, հավերժացնում են նրա ստեղծած հայ ճարտարապետության գանձարանը հարստացրած քաղաքակրթական բարձրարժեք կոթողները, որոնց գլուխգործոցն է Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Գարեգին Հովսեփյանը, մեծ գովեստով արտահայտվելով հայ եկեղեցական ճարտարապետության մասին, գրել է. «Քիչ չեն և փառավոր տաճարներ, որոնք հայ նախնի ճարտարապետության ոգին ու ավանդությունները պահելու հետ, ունեն և ԺԳ. դարու վերածնության հատուկ գծեր և զարդարանքի ոճեր: Հովհաննավանքը Վաչուտյանց իշխանության մեջ, Գանձասարը՝ Խաչենի, Ամաղուն կամ Նորավանքը՝ Օրբելյանների, Դսեղի Բարձրաքաշը՝ Մամիկոնյանների, Գեղարդը (Ս. Աստուածածին)՝ Խաղբակեանների, նույնը կարող ենք ասել բոլոր մեծ ու փոքր իշխանությունների համար, կենդանի և խոսուն վկաներ են մի աննման, եռանդուն շինարարության, որի նմանը քիչ է կրկնվում պատմության մեջ»[6]: Հասան-Ջալալի համահայկական գործունեության վկայության կարևոր հուշարձան է հիմնովին վերականգնված Կեչառիսի վանական համալիրը: Գ.Հովսեփյանը գրել է՝ «Թաթարական արշաւանքի ժամանակ այս շէն և փառաւոր վանքը… աւերման է ենթարկուում: Մեր միակ աղբիւրն այդ մասին Խաչենի Խոյախան [Խոխանաբերդ] բերդի մեծ իշխան՝ Վախթանկի որդի Հասան-Ջալալի և նրա կնոջ՝ Բաղաց թագաւորի դուստր Մամքանի արձանագրութիւնն է՝ ժամատան երդիկի պատուանդան կազմող գարնէզի վերայ…: Այդ երկու ամուսինները 1248 թուին, վանքի առաջնորդ Մխիթարի օրով, ուխտ են գալիս և «բազում գանձիւք վերստին» նորոգում են «մեծ և հռչակավոր» վանքը և իւրաքանչիւր տարի քառասուն դուկատ նուէր նշանակում. . . «Վարդապետները Մխիթարի և միւս միաբանների հետ սահմանում են բոլոր եկեղեցիներում երկու օր պատարագ, աւագ զատկին Հասան-Ջալալին «և :դ: շաբաթն աւրն» Մամքանին»[7]:

Բ.Ուլուբաբյանը, բարձր գնահատելով Հասան-Ջալալի համազգային շինարարական գործունեությունը, գրել է. «Հասան-Ջալալի կենսագրության նշանակալից մասն է կազմում իր շինարարական գործունեությունը՝ ծավալված հայրենի Խաչենում և Խաչենի սահմաններից դուրս՝ Հաղբատում ու Կեչառիսում... 1216-1238 թթ. Հասան-Ջալալի ու նրա հարազատների հոգսը Գանձասարի վանքի շինարարությունն էր: Թաթար-մոնղոլների առաջին արշավանքների, ավերի ու ավարի միջոցին նրանք ասես վերացել էին ժամանակից ու տարածությունից և կառուցում էին հավերժության համար, հաստատելով այն պարզ ճշմարտությունը, որ արարիչ ձեռքն անհնար է կտրել»[8]:

միաբանեցայ եպիսկոպոսարանիս ի ձեռն հոգևոր որդւոյ իմոյ տէր Մարգարէին, յիշխանութեան Մեծի Ջալալ Դաւլին…» (Մ. Բարխուտարեանց, նշվ. աշխ,, էջ 192):

[1] Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 32, 46, 47, 217:

[2] Կիրակոս Գանձակեցի, էջ 285:

[3] Г. Микаелян, История Киликийского Армянского государства, Ереван, 1952, с. 298, Ա. Գալստյան. Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները.– ՊԲՀ, 1964, -1, էջ 99, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 700, Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 194–195, 232, Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 304, Է. Դանիէլեան, Գանձասարի պատմութիւն, Երեւան, 2005, էջ 129–131:

[4] Հ. Մանանդյան, Երկեր, Գ, էջ 227:

[5] Է.Դանիելյան, Արցախ-Խաչենի իշխանության նշանակությունը Կիլիկիայի Հայկական թագավորության Արևելյան քաղաքականության մեջ (XIII դարի 40-ական թվականներին). ՊԲՀ, 2016, N 1, էջ 33-42:

[6] Գարեգին կաթողիկոս Յովսէփեան. Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 12:

[7] Նույն տեղում, էջ 23-24:

[8] Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 176-177: Հասան Ջալալի համահայկական գործունեությունը դրսևորվել է նաև միջնադարյան հոգևոր ժողովածուների ստեղծման ասպարեզում: Ինչպես նշել է Մ.Թ.Ավդալբեգյանը, տեր Իսրայելի Հայսմավուրքի ընդօրինակության հիշատակարանից «իմանում ենք, որ նա ժամանակակիցն է Խաչենի Ջալալ-Դոլա իշխանի և Վանական Վարդապետի. «Արդ, այս տօնացոյց կարգեալ եղև բովանդակ տարոյ աշխատութեամբ տէր Իսրայելի Խաչենցոյ եպիսկոպոսի հրամանաւ Վանական Վարդապետի ի խնդրոյ Ջալալ-Դօլի տեառն Խաչենոյ, և տէր Գրիգորի եպիսկոպոսի» (Մ.Թ.Ավդալբեգյան, Հայ միջնադարյան ժողովածուների պատմությունից (Հայսմավուրքային խմբագրություններ). – ՊԲՀ, N 3, 1979, էջ 157):

Հայաստանում և Վիրքում հարկերի ծանրացման հետևանքով Արցախի գահերեց իշխանը, ի թիվս այլ իշխանների, դիմակայեց մոնղոլներին: Սակայն ապստամբական շարժումը ճնշվեց, որի ղեկավարները դաժանորեն սպանվեցին[1]: Կիրակոս Գանձակեցին Հասան-Ջալալի մահը (1261թ.) նկարագրել է որպես սուրբ նահատակություն[2]:

Հայոց պատմության նենգափոխմամբ զբաղվող արհեստածին Ադրբեջանի կեղծարարների սնանկ ճիգերն ուղղված են հատկապես Արցախի հազարամյակների խորքից եկող պատմամշակութային հարուստ ժառանգության դեմ, որի անքակտելի մասն են Արցախի գահերեց իշխան Հասան-Ջալալ Դոլայի ժամանակներում ազգային ավանդույթների հիման վրա ստեղծված բարձր մշակութային արժեքները: Սակայն պատմական ճշմարտությունը անսասան է: Հայոց քաղաքակրթական արժեհամակարգի գիտակցումն անպարտելի է դարձնում Հայրենիքի պաշտպաններին ընդդեմ Ադրբեջանի ագրեսիվ գործողությունների: Արցախյան ազատամարտի հաղթանակի խորհրդանիշ ԳԱՆՁԱՍԱՐԻ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ոգեղեն գնահատականը տվել է ազատամարտիկ Գագիկ Յոլչյանը: Գանձասարում եղած ժամանակ, նախքան Վաղուհասի կողմն արշավելը՝ իր կյանքի վերջին մարտից առաջ, նա զինակիցներին ասել է. «Մեր կյանքն ինչ է այս հրաշագործության համեմատությամբ: Որ նա մնա, մենք էլ կմնանք»:

Այսպիսով՝ Արցախի գահերեց իշխան, Հայկազուն-Սիսակյան-Առանշահիկ-Վախթանգյան Հասան-Ջալալ Դոլայի՝ քաղաքական, դիվանագիտական և մշակութային ոլորտներում համահայկական նշանակության գործունեության արգասիքները, հարստացնելով Հայոց քաղաքակրթական արժեհամակարգը, հզոր հայրենանվեր ոգեղեն լիցք են կրում:

[1] Ըստ Հ. Մանանդյանի, Հասան-Ջալալի և մյուսների ձերբակալությունը պիտի կապված լիներ այդ ապստամբության հետ (Հ. Մանանդյան, Երկեր, Գ, էջ 250): Լ. Բաբայանը Հասան-Ջալալի ձերբակալությունը համարել է տեղի ունեցած այդ ապստամբության շրջանում, իսկ մահը՝ ապստամբությունը ճնշվելուց հետո (տես՝ ՀԺՊIII, էջ 630, 632): Ըստ Բ.Ուլուբաբյանի՝ «Անմիջական տեղեկություն չկա այս ապստամբությանը Հասան-Ջալալի բերած մասնակցության մասին: Սակայն հիմնազուրկ չի լինի մի այդպիսի ենթադրությունը, քանի որ հենց նույն ապստամբության ճնշումից հետո էր, որ Արղունը կալանավորեց Հասան-Ջալալին» (Բ.Ա.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 207):

[2] Կիրակոս Գանձակեցի, էջ 391-392: